Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ Ք. ՎԻԼՆՅՈՒՍ (ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անուն, ազգանուն.

Անի Վիրաբյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Լիտվայի Հանրապետություն, ք. Վիլնյուս, 18-23 նոյեմբերի, 2024 թվական

4. Հրավիրող կողմը.

Լիտվայի Հանրապետության Միկոլաս Ռոմերիս համալսարան

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+» T-GREEN «Մագիստրոսական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (ERASMUS+CBHE project «Transforming Graduate Education for Green and Sustainable Future» (T-GREEN)) նախագծի հերթական աշխատաժողովին

6. Քննարկված թեմաները.

- «կանաչ» համատեղ կամ կրկնակի մագիստրոսական ծրագրերի մշակման մեթոդաբանությունը,
- «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստոսական ծրագրի նկարագրությունը, նպատակները և առանձնահատկությունները,
- «Բլոկչեյն և թվային արժույթներ» մագիստոսական ծրագրի ընդունելության պահանջները, ծրագրի նկարագրությունը, նպատակները և առանձնահատկությունները,

- «Կայուն քաղաքներ» մագիստոսական ծրագրի նկարագրությունը, նպատակները և առանձնահատկությունները,
- «Կանաչ» մագիստրոսական ծրագրերի կայունության ապահովման, նորարարական մոդուլների մշակման և գնահատման մեթոդների կատարելագործման վերաբերյալ ԵՄ փորձը,
- «Էրազմուս+» T-GREEN «Մագիստրոսական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» նախագծի երկրորդ և երրորդ եռամսյակների գործողությունների պլանները և բարելավումների պլանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում մասնակցել եմ «Էրազմուս+» T-GREEN «Մագիստրոսական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» նախագծի հերթական աշխատաժողովին: Վերջինս վերաբերում էր նախագծում ներգրավված ՀՀ բուհերի կողմից կազմվող «կանաչ» համատեղ կամ կրկնակի մագիստրոսական ծրագրերի մշակման մեթոդաբանությանը: Աշխատաժողովի ընթացքում նախագծում ներառված ՀՀ բուհերի ներկայացուցիչների կողմից ներկայացվեց մի շարք մագիստրոսական ծրագրերի, մասնավորապես, «Կանաչ տնտեսություն և կառավարում», «Բլոկչեյն և թվային արժույթներ», «Կայուն քաղաքներ» մագիստոսական ծրագրերի նկարագրությունը, ընդունելության պահանջները, նպատակները և առանձնահատկությունները:

Համաժողովի ընթացքում Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանի և Կրակովի Յագելոնյան համալսարանի ներկայացուցիչների կողմից ներկայացվեց «կանաչ» համատեղ կամ կրկնակի մագիստրոսական ծրագրերի մշակման եվրոպական առաջատար փորձը՝ կարևորելով համեմատական վերլուծությունը, արդյունքահեն կրթության սկզբունքների ներդաշնակեցումը, ծրագրերի կայունության ապահովումը, նորարարական մոդուլների մշակումը և գնահատման մեթոդների կատարելագործումը՝ ծրագրերի համատեղելիությունն ու ուսումնական արդյունքները բարելավելու նպատակով: Աշխատաժողովին քննարկվեց նաև նախագծի երկրորդ և երրորդ եռամսյակների գործողությունների պլանները և բարելավումների պլանը:

Համաժողովի ընթացքում հանդես եմ եկել ողջույնի խոսքով, որտեղ նշել եմ նախագծի շրջանակում մինչ օրս իրականացված աշխատանքներին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մասնակցության, ինչպես նաև «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում որոշումներ և պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ընթացքում առաջարկվել է ԵՄ գործընկերների հետ համատեղ շարունակել Նախագծի կոնսորցիումի անդամների միջև համագործակցային աշխատանքների իրականացումը Նախագծի 4-րդ փաթեթի շրջանակում նախատեսված գործողությունների սահուն ընթացքն ապահովելու նպատակով:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ ԱՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ

27 նոյեմբերի, 2024 թվական